Նոտարական ակտի կոդ: 699-20210405-37-5026520
Նոտարական ակտի գաղտնագիր: NB9SHH

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Արթիկ
երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի վեց

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԿԱՄՈ ՀԵՆՐԻԿԻ ՔՅԱԼԱՋՅԱՆԸ**, ծնված՝ 31/03/1958թ-ին, ՀԾՀ՝ 4103580100, անձնագիր՝ AN0698705, տրված՝ 028-ի կողմից, 04/11/2013թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԱՂԱՔԱՐՅԱՆ Փ., 10/2 Տ, այսուհետ՝ <<Վարձատու>> մի կողմից, և «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, այսուհետ՝ <<Վարձակալ>>, ի դեմս Գլխավոր քարտուղար՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**, ծնված՝ 13/08/1983թ-ին, ՀԾՀ՝ 2308830506, անձնագիր՝ AM0406525, տրված՝ 012-ի կողմից 04/08/2011թ-ին, հաշվարված՝ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. / 14/2 / 2, որի անունից համաձայն 05.04.2021(հինգը ապրիլի երկու հազար քսանմեկ) թվականին տրված N 02/12-1/9721-21 լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ **ԱՆԺԵԼԱ ԳՐՈՒԶԻ ՍՈՂՈՅԱՆԸ**, ծնված՝ 20/10/1983թ-ին, ՀԾՀ՝ 7010830106, անձնագիր՝ 003206000, տրված՝ 028-ի կողմից, 02/04/2015թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ. 4 ՆՐԲ., 6 Տ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Գ. Նժդեհի փողոց, թիվ 3/30(երեք կոտորակ երեսուն) տարածք հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացվող 20(քսան)ք.մ. մակերեսով տարածքը, համաձայն կողմերի կողմից ներկայացրած հատակագծի, այսուհետ՝ <<Անշարժ գույք>>, որը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

1.2.Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է <<Վարձատու>>-ին, ինչը հաստատվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 01042021-08-0041, որով հաստատվել է 25.03.2021(քսանհինգը մարտի երկու հազար քսանմեկ) թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը:

1.3.<<Անշարժ գույք>>-ը վարձակալվում է ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:

1.4.Սույն պայմանագրի կնքման պահին <<անշարժ գույք>>-ի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումից 05.04.2021(հինգը ապրիլի երկու հազար քսանմեկ) թվականին տրված N ՄՏ-05042021-08-0113 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Վարձատուն իրավունք ունի

2.1.1.Վարձակալից պահանջել <<Անշարժ գույք>>-ն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:

2.1.2.Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:

2.1.3.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը <<անշարժ գույք>>-ից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան:

2.2.Վարձատուն պարտավոր է

2.2.1.<<Անշարժ գույք>>-ը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2.<<Անշարժ գույք>>-ը վարձակալին հանձնել ընդունման-հանձնման ակտով, դրա պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.3.Վարձակալին նախազգուշացնել գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին, իր հաշվին իրականացնել շենքի հիմնական վերանորոգումը:

2.2.4.<<Անշարժ գույք>>-ը այլ անձի օտարելու դեպքում, օտարման պայմանագիրը վավերացնելուց 1 /մեկ/ ամիս առաջ գրավոր նախազգուշացնել Վարձակալին:
2.2.5.<<Անշարժ գույք>>-ը վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագրի կնքման օրը ընդունման հանձման ակտով:
2.3.Վարձակալն իրավունք ունի՝
2.3.1.Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.5 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել <<անշարժ գույք>>-ը:
2.3.2.Վարձատուից պահանջել իրեն տրամադրել <<Անշարժ գույք>>-ը ընդունման-հանձնման ակտով, գույքի պատկանելիքները, դրան վերաբերող փաստաթղթերը:
2.3.3.<<Անշարժ գույք>>-ի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս իր ընտրությամբ Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու <<Անշարժ գույք>>-ի թերությունները, կամ համաչափ իջեցնելու վարձավճարը:
2.3.4.Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:
2.3.5.Պահանջել նվազեցնելու Վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, <<Անշարժ գույք>>-ի վիճակը վատթարացել է:
2.4.Վարձակալը պարտավոր է՝
2.4.1.Ժամանակին մուծել <<Անշարժ գույք>>-ն օգտագործելու համար նախատեսված վճարը:
2.4.2.Պայմանագիրը դադարելու դեպքում ընդունման-հանձնման ակտով Վարձատուին վերադարձնել <<Անշարժ գույք>>-ն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:
2.4.3.Ժամանակին մուծել <<Անշարժ գույք>>-ն օգտագործելու համար նախատեսված կոմունալ ծախսերը/այդ թվում՝ ջրի, էլեկտրաէներգիայի, գազի, հեռախոսակապի և այլն/, եթե այդպիսիք նախատեսնված են այլ կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով:
2.5.Վճարներն ուշացնելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տուգանք պայմանագրի գումարի զրո ամբողջ հինգ տոկոսի չափով և կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գումարի 0.05 /զրո ամբողջ զրո հինգ/ տոկոսի չափով:
2.6.Տուգանքի / տուգանքի կամ տույժի/ վճարում կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումներր վերացնելուց;
2.7.Վարձատուն պատասխանատվություն չի կրում <<Անշարժ գույք>>-ի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին <<Անշարժ գույք>>-ը զննելիս, կամ <<Անշարժ գույք>>-ը վարձակալության հանձնելիս դրա վիճակն ստուգելիս:
3.**Սույն պայմանագիրը կնքվում է մինչև երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանհինգը (25.12.2022թ.) ժամկետով**:
4.Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 25.000(քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ներառյալ եկամտային հարկը, որը վարձակալը պարտավորվում է վճարել վարձատուին յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ քան տվյալ ամսվա հինգը (5)-ը, վճարումները կատարվում են վարձատուի կողմից ներկայացված բանկային հաշվեհամարին **(հաշվեհամար-2470052376040040)**:
5.Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝
5.1.<<Անշարժ գույք>>-ն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ <<Անշարժ գույք>>-ի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:
5.2.Էականորեն վատթարացել է <<Անշարժ գույք>>-ի վիճակը.
5.3.Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:
5.4.Խախտել է պայմանագրով նախատեսված որևէ այլ էական պահանջ:
6.Պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է վաղաժամկետ լուծվել ցանկացած ժամանակ:
7.Սույն պայմանագրի գործողության ընթացքում <<Անշարժ գույք>>-ի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
8.Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:
9.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:
10.Սույն պայմանագրով կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են կողմերի կողմից, վավերացված նոտարական կարգով և դրանցից ծագող գրանցման ենթակա իրավունքները գրանցված են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական լիազոր

մարմնում:
11.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է նոտարական գրասենյակում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:
12.Պայմանագրից ծագող, բայց պայմանագրով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են գործող օրենսդրությամբ:
13.Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման պահից:
14.Պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարված են Վարձատուի կողմից:
15.Սույն պայմանագրից ծագող իրավունքները 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում կամ գրանցումն իրականացնող այլ իրավասու մարմիններում:

<<Վարձատու>>՝

1. _____

<<Վարձակալ>>-ի լիազորված անձ՝

1. _____

06/04/2021 երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի վեցին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար՝ ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲԶՆՈՒՆՈՒՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ <<Վարձատու>>-ի իրավունք(ներ)ը ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյան թիվ----1261----------ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բզնունի

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՆՈՏԱՐԻԱԼԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՈՏԱՐԻՈՒՍ ԳԱԳԻԿ ԲԶՆՈՒՆԻ
ШИРАКСКИЙ МАРЗ НОТАРИАЛЬНАЯ ТЕРРИТОРИЯ
"SHIRAK MARZ" NOTARIAL TERRITORY
NOTARY BZNUNI GAGIK
RA 89656742